ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՔԻՉ ԵՆ ԿԱՐԴՈՒՄ...

Այն հարցին, թե ի՞նչ կարծիք ունեք գեղարվեստի ակադեմիայի ուսանողության մասին, բուհի ռեկտոր, պրոֆ. **ԱՐԱՄ ԻՍԱԲԵԿՅԱՆԸ** պատասխանեց. «Եթե վատ կարծիք ունենայի, չէի աշխատի: Այսօր շատ տաղանդավոր ուսանողներ կան գեղարվեստի ակադեմիայում: Երկար տարիներ՝ սկսած 70-ական թթ. սկզբից, այս բուհում եմ, 1979թ.-ից այստեղ դասավանդում եմ:

Իմ կարծիքով, և առհասարակ իմ սերնդակիցների կարծիքով, ներկա սերնդի համար ամենամեծ բացն այն է, որ քիչ են կարդում»:

ՄՇԱԿՈՒՅԹԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՊԱՐՏԵԼԻ ԿԼԻՆԵՆ

ասում է Արամ ԻՍԱԲԵԿՅԱՆԸ

Գեղարվեստի ակադեմիան արդեն 60 տարի գոյություն ունի, այսինքն հայ մշակութային կյանքում 60 տարի իրադարձություններ են տեղի ունեցել, որոնք «արժանի են հիշատակման»: Հոբելյանը առիթ էր զրուցելու բուհի ռեկտոր, նկարիչ, պրոֆեսոր Ա. ԻՍԱԲԵԿՅԱՆԻ հետ:



-Պրն. Իսաբեկյան, այսօր ի՞նչ խնդիրներ կան գեղարվեստի ակադեմիայում, որ անհրաժեշտ է անհապաղ կարգավորել, մանավանդ որ այս տարի բուհի 60-ամյակն է:

-Խնդիրներ ամենուրեք կան. ամեն օր դրանցից որոշները կարգավորվում են, որոշները՝ առաջանում: Բուհական կառույցի խնդիրներից կար որագույնը կրթական մակարդակը պատշաճ բարձրության վրա պահելն է: Նախևառաջ մենք աշխատում ենք այդ ուղղությամբ:

Գեղարվեստի ակադեմիան պատմություն ունեցող բուհ է, ստեղծումից ի վեր ավագ սերունդը նվիրված աշխատում է, չնայած ոմանք տարիքի պատճառով չեն կարողանում ամբողջական ուժերով կրթել մատաղ սերնդին, ոմանք էլ, ցավալիորեն, կյանքից հեռացել են. միջին սերունդը համալրում է նրանց, շարունակում կրթելու ազգանվեր գործը: Խնդիրը երիտասարդ կադրերով դասախոսական կազմը համալրելու մեջ է: Այսօր քչերն են համաձայնում ոչ շահավետ պայմաններով մնալ բուհում: Նրանք ուզում են լավ վարձատրվող աշխատանք ունենալ, լավ ապրել:

Խնդիր առկա է նաև դասավանդող տարբեր սերունդների մատուցածի որակների մեջ. ցավալիորեն սերնդից սերունդ որակը նվազում է, չնայած համոզված եմ, սերնդափոխությունը բնականոն է լինելու և մեր ժողովուրդը հաղթահարելու է այդ խնդիրները:

-1994 թվականին, երբ թատերական ինստիտուտն առանձնացավ գեղարվեստի ակադեմիայից, դրական քայլ արձանագրվեց: Սկսվեց նոր շրջան բուհի պատմության մեջ: Ի՞նչ փոխվեց:

Ընդունված է, որ երբ կերպարվեստի և թատրոնի բուհերը գործում են միասին, միմյանց խանգարում են: Կյանքն ապացուցեց, որ առանձնանալուց հետո և թատերական ինստիտուտն սկսեց զարգանալ, և գեղարվեստի ակադեմիան, չնայած դրանից հետո սկսվեցին բոլոր դժվարությունները, որ հիմա առկա են: Շենքային պայմաններ չկային, իսկ պետությունն առաջարկում էր տարածք քաղաքի ծայրամասներում: Հետևողական աշխատանքի արդյունքում այժմ ունենք Իսահակյան 36 և Ջրաշատի 1 հասցեներում գտնվող երկու մասնաշենք:

Հիմնական կապիտալ վերանորոգման աշխատանքները կատարել ենք, լուծել ենք ջեռուցման խնդիրը, սակայն տեսանելին միշտ արտաքին հարդարանքն է, որն էլ որոշ ժամանակ հետո կլինի: Գեղարվեստի ակադեմիայի կմախքն ամուր է, մնում է գեղեցկացնել:

Բացել ենք նոր բաժիններ՝ հագուստի մոդելավորման, համակարգչային գրաֆիկայի, գորգի, մետաղի գեղարվեստական մշակման բաժինները: Մեր խնդիր է կայացնել այդ բաժինները:

Այսօր քանի որ հանրապետությունում համակարգչային գրաֆիկայի մասնագետները քիչ են, չենք կարողանում նոր լավագույն մասնագետներով համալրել դասախոսական կազմը. սակայն Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հետ համաձայնություն ունենք, որ եթե մենք ԱՄՆ-ում գտնենք համապատասխան մասնագետն ու հրավիրենք, դեսպանատունը կվարձատրի նրանց: Հիմա այդ գործընթացներն ընթացքի մեջ են:

Սակայն խնդիրներով հանդերձ, այսօր կարող ենք փաստել նաև լուրջ հաջողություններ: Եթե 1994թ ունեինք 200 ուսանող, ապա այսօր ուսանողների թիվը Դիլիջանի և Գյումրիի մասնաճյուղերի հետ ընդհանուր հասնում է մոտ 700-ի, ընդ որում մեծ թվով ուսանողներ կան նաև արտասահմանից:

-Պրն. Իսաբեկյան, իսկ ի՞նչ կարծիք ունեք այսօր ուսանողության մասին:

-Եթե վատ կարծիք ունենայի, չէի աշխատի: Այսօր շատ տաղանդավոր ուսանողներ կան գեղարվեստի ակադեմիայում: Երկար տարիներ՝ սկսած 70-ական թթ. սկզբից այս բուհում եմ, 1979թ.-ից այստեղ դասավանդում եմ:

Իմ կարծիքով, և առհասարակ իմ սերնդակիցների կարծիքով, ներկա սերնդի համար ամենամեծ բացն այն է, որ քիչ են կարդում: Կարդալը շատ օգնում մարդուն, իսկ արվեստագետի համար կարծես ամենահրաժեշտությունն է կարդալ: Մարդու կյանքն այնքան կարճ է, որ նա չի հասցնի ամեն սխալվրա սովորել ինչ-որ բան, պիտի շատ կարդա, որպեսզի սխալներ քիչ թույլ տա:

-Ի՞նչ կարծիքի եք Հայաստանի ներկայիս մշակութային իրադրության մասին:

Արվեստում թվացյալ ազատություն կա, սակայն իրականում, եթե համեմատություններ անենք, կտեսնենք, որ իրավիճակը մտահոգիչ է: Ընդունված է, որ անցումային շրջանում մշակույթը բավականին անկում է ապրում: Այսօր հասարակությունը պատրաստ չէ արվեստ ընկալել: Ամեն մարդ հարցն է լուծում. միջին որակի նկարիչ իր անվան թանգարան է բացում: Անգրագիտություն կա, նամանավանդ լրագրողների մոտ, ովքեր կարող են ամեն ինչ գովել առանց հասկանալու: Մենք նավթ չունենք, մեր ռեսուրսները մարդկայինն ու մենք կարող ենք հզոր դարձնել:Մեր մշակույթը պահպանելու և շենացնելու դեպքում միայն անպարտելի կլինենք:

Հարցազրույցը վարեց
Մոմիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ